2022-2023 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

10 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ 120 րոպե:
Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:
Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:
Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Թվարկվածներից որը՞ ֆիդայիների բարոյական սկզբունքներից չէ:
1) Կյանքը զոհել հայրենիքի և ազգի համար:
2) Լինել գաղտնապահ, ճշտախոս, բարոյապես բարձր:
3) Մաքուր պահել զենքը, կրակել անվրեպ:
4) Հարգանքով վերաբերվել իր ազգի աշխատավոր ժողովրդին:

2. 1896 թ. հայ մարտիկները որտեղի՞ց էին նահանջում, որ Մազրիկ ցեղի «համիդիե» 8-10 հազարանոց հրոսակները ուխտադրուժ հարձակվեցին նրանց վրա:
1) Վանից 2) Խարբերդից 3) Խանասորից 4) Մուշից

3. Համապատասխանեցնել ջոկատները հրամանատարներին:

		Նշեք ճիշտ պատասխանը՝
1.Անդրանիկ Օզանյան	ա. 2-րդ ջոկատ	1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
2.Դարաստամատ Կանայան (Դրո)	բ. 3-րդ ջոկատ	2) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
3.Համազասպ Սրվանձտյան	գ. 4-րդ ջոկատ	3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
4.Արշակ Գաֆավյան (Քեռի)	դ. 1-ին ջոկատ	4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

4. Առաքելոց վանքում պաշարման ընթացքում Անդրանիկը ի՞նչ առաջարկեց թուրքերին:
1) ազատել գերիներին 2) ազատել քաղբանտարկյալներին
3) բանակցել 4) հանգիստ թողնել հայ բնակչությանը

5. Հայկական առաջին կամավորական ջոկատը ո՞ր ճակատամարտին է մասնակցել:
1) Դիլմանի 2) Բաշկալայի 3) Վանի 4) Դատավանի

6. Ո՞րքան է տանկի մեռյալ տարածությունը:
1) 30-40 մ 2) 20-30 մ 3) 30-35 մ 4) 20-25 մ

7. Համապատասխանեցնել պայմանական նշանները անվանումներին

1.
2.
3.
4.

ա. Ավտոմեքենա
բ. Տանկ
գ. Հետևակի մարտական մեքենա
դ. Զրահափոխադրիչ

Նշեք ճիշտ պատասխանը՝
1) 1-դ, 2-ա, 3-դ, 4-գ
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

8. Համապատասխանեցնել պայմանական նշանները անվանումներին:

1.
2.
3.
4.

ա. Աշտարականման շինություններ
բ. էլեկտրակայաններ
գ. Առանձին քար
դ. ռադիո և հեռուստա և հեռուստահաղորդման կայմեր

Նշեք ճիշտ պատասխանը՝
1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

9. Տեղագրական քարտեզի վրա ի՞նչ է ցույց տալիս նշված պայմանական նշանը

1) Ռադիո և հեռուստահաղորդման կայաններ 2) Բջջային ցանցի տարածման կայաններ
3) Գործարանի ծխնելույզ 4) Տան ծխնելույզ

10. Որքա՞ն է S-80 տանկի 12,7 մմ զենիթային գնդացրի մարտալրակզմը:
1) 300 փամփուշտ 2) 250 փամփուշտ 3) 400 փամփուշտ 4) 2000 փամփուշտ

11. Ի՞նչ է դառնում տանկը, երբ ձեռքի տակ եղած միջոցներով դիտասարքերը խոցում կամ փակում (ծածկում) են:
1) «կույր» 2) «խոցելի» 3) «բռնված» 4) 2000 «ծածկված»

12. Հրետանավորը պայթյունը լսել է բռնկումից 6 վայրկյան հետո: Հեռավորությունը մինչև հարվածի տեղը հավասար կլինի՝

1) 3 կմ 2) 2 կմ 3) 3,5 կմ 4) 2,5 կմ

13.Մարդատար ավտոմեքենայի չափերը քանոնով չափելիս ստացվել է 4 մմ: Որքա՞ն է Ձեր կանգնած կետից մինչ տվյալ ավտոմեքենան եղած հեռավորությունը:
1) 150 մ 2) 250 մ 3) 200 մ 4) 340 մ

14.Հորիզոնում գտնվող զրահամեքենայի հետ մատիտը համեմատելիս այն ամբողջությամբ ծածկում է զրահամեքենան: Որքա՞ն է կազմում դիտակետից մինչ զրահամեքենան եղած հեռավորությունը:
1) 250 մ 2) 200 մ 3) 350 մ 4) 300 մ

15. Որքա՞ն է ԿՁԱ ավտոմատից (7.62մմ), 500 մետր հեռավորությունից արձակված գնդակի թափանցելիությունը հողե արգելքի (ավազահողի) մեջ:
1) 30-40 սմ 2) 25-30 սմ 3) 20-25 սմ 4) 20-30 սմ

16. Որքա՞ն պետք է լինի գնդակի կինետիկ էներգիան, որպեսզի կարողանա շարքից հանել մարդու կենսական օրգանները:
1) 78.5 Ջոուլից ոչ պակաս 2) 78 Ջոուլ 3) 62 Ջոուլ 4) 70 Ջոուլից ոչ պակաս

17.Հակատանկային հրթիռային համալիրը ի՞նչ հեռավորության վրա կարող է իրականացնել հրաձգությունը՝ գիշերը:
1) 100-5500 2) 100-3500 3) 100-4000 4) 100-3000

18.Որքա՞ն է օդից ծանր քլորը:
1) 3 անգամ 2) 2 անգամ 3) 2,5 անգամ 4) 4 անգամ

19. Ինչպե՞ս է կոչվում միջուկային պայթյունի ժամանակ արձակվող գամմա ճառագայթների և նեյտրոնների հոսքը:
1) Ներթափանցող ալիք 2) Այրող ճառագայթում
3) Իոնացնող ճառագայթում 4) Ներթափանցող ճառագայթում

20.Ինչպի՞սի հիվանդություններ են առաջացնում ռիկետսիաները
1) Կարդիոզ 2) Բծավոր տիֆ, տենդ 3) Բուտուլիզմ 4) Տենդ